


Երևանի քաղաքապետի Վահագն Կարամյանը:



Գարո Բուլդուկյան «Միգարն ինձ համար կիրք է»

Հայտնի ծխախոտագործը պատմում է Garo Habano սիգարների ստեղծման և անցած ուղու մասին ու հայ սիգարասերներին խորհուրդ տալիս՝ սիգարը չպեաք է ծխել. այն պետք է վայելել

Հետաքրքիր է լսել ձեր ընտանիքի, հայկական արմատների մասին:

Ծնվել եմ Լիբանանում: Ընտանիքս Ադանայից գաղթել է Լիբանան: Բուլդուկյաններն Ադանայում հայտնի մարդիկ էին. զբաղվել են կալվածատիրությամբ, ծխախոտագործությամբ, ունեցել են բամբակի խոշոր դաշտավայրեր: Նըրանք մեծ դիրք են ունեցել նաև քաղաքականության հարցերում՝ զբաղեցնելով քաղաքապետի պաշտոնը: Բռնագաղթումից հետո մեր ընտանիքն Ադանայից տեղափոխվում է Բեյրութ, որտեղ ևս մեծ մասնակցություն է ունենում քաղաքական և հասարակական կյանքում: Հորեղբայրս 1950-ականներին այստեղ հիմնում է Bourj Hamoud ընկերությունը, սրը զգալի ներդրում է կատարում քաղաքի շինարարության, կոշիկեղենի արտադրության և բանկային ոլորտներում: Լիբանանի քաղաքացիական պատերազմի տարիներին մեր ազգականները տարածվում են աշխարհի տարբեր մասերով: Պատերազմի ընթացքում ամենամեծ կորստը կրեց մեր ընտանիքը. հայրս 51 տարեկանում ամբակոծումների գոհ դարձավ: Բուլդուկյանների մի մասն

բացի մասին. մարդիկ հեաաքրքրվում են սիգարով, փորձում են պարզել այն ամենը, ինչ անհասկանալի է իրենց: Հեռուստատեսային հարցազրույցներից մեկում նշել եք. «Միգար սկսել եմ ծխել այն ժամանակվանից, ինչ ինձ հիշում եմ»: Ե՞րբ եք առաջին անգամ վառել սիգարի գլանակը:

16 տարեկան էի: Հաճախ էի այցելում իմ զարմիկներին, ովքեր շատ հարուստ մարդիկ էին ու սիգարի մեծ աֆիսիոմանդներ: Տեսնում էի՝ ինչպես են նրանք սիգար վայելում, ու մեծ ցանկություն ունեցա ճաշակել այդ հաճույքը: Փորձում էի նրանց մտնակել՝ առանց նկատելու, որ դեռահաս տարիքսն արդեն դարձել եմ սիգարի մեծ երկրպագու: Առաջին անգամ սիգար ծխել եմ հենց այդ տարիքսն, սակայն այսօր էլ սիգարի նոր համեր փորձելով՝ կարծես առաջին անգամ եմ վառում զլանակը: Ես փորձում եմ սիգարի ոչ միայն համային նրբերանգը բացահայտել, այլև հոսկանակ ու զննել դրա որակը, տարբերություններն ու առավելությունները, օրինակ՝ ինչու է ավելի քանկ, քան մյուսները: Սկզբում ամեն ինչ սովորական նախասիրության էր, որ հե-

«Միգարն իմ կիրքն է. կիրքը հաղթեց իմ մասնագիտական պարտականությանը, ու ես շարունակեցի իմ ուղին սիգարների հետ»

այս աղետալի դեպքերից հետո հաստատվեց Կիպրոսում, մյուսները՝ Ֆրանսիայում, Կանադայում և Լոնդոնում, իսկ ես ընտրեցի Կալիֆորնիան՝ բժշկական կրթություն ստանալու համար: Մայրս, եղբայրներս ու քույրերս այսօր իմ կողքին են՝ Կալիֆորնիայում:

Սա ձեր երրորդ այցելությունն է Հայաստան: Ի՞նչ տպավորություններ ունեց:

2 ասրի առաջ, երբ առաջին անգամ եկա Հայաստան, հիշում եմ, սպիտակ բանկոնով մի մարդ կանչեց՝ Գարո Հաբանան: Հուզվեցի... Հայաստանում ինձ ճանաչում են: Մա երրորդ այցելությունս է Հայաստան: Այս անգամ ես ինձ հանգիստ եմ զգում՝ ինչպես իմ ասնը: Այլևս ուղեկցողի կարիք չունեմ: Փողոցների անունները սկսել եմ սովորել: Այս այցելությունների ժամանակ հաճելիորեն զարմացա՝ տեսնելով, որ սիգարը Հայաստանում աստիճանաբար իր հաստատուն տեղն է զբաղում հատկապես բարձր հասարակության շրջանում: Անցյալ ասրի հրավիրված էի մասնակցելու Միգարի հայկական ասոցիացիայի կողմից կազմակերպված «Հայ Միսք-2007» Միգարի միջազգային փառատոնին: Այս հանգամանքն արդեն խոսում է առաջըն-

տագայում վերածվեց պաշամունքի ու մեծ բիզնեսի: **Դուք Դոմինիկյան հանրապետություն մեկնեցիք բժշկական կրթություն ստանալու համար, սակայն դարձաք ծրխախոտագործ... Ինչու՞ այդպես ստացվեց:**

1994-ին Սանկտ-Պետերբուրգից մեկնեցի Դոմինիկյան հանրապետություն բժշկական կրթությունս այնտեղ շարունակելու: Ուսումնառության ասրիներին մի անգամ առիթ ունեցա ներկա լինելու սիգարի արտադրության ընթացքին: Օրեր անց հասկացա, որ սեփական սիգար արտադրելու գաղափարն ինձ հանգիստ չի տալիս: Միգարն իմ կիրքն է. կիրքը հաղթեց իմ մասնագիտական պարտականությանը, ու ես շարունակեցի իմ ուղին սիգարների հետ:

Կալիֆորնիայում բողարկեցի Garo Habano առաջին հոսքողիծը: Հեռո հանդիպեցի դիզայներների հետ: Նրանց ասացի, որ սիգարների վրա ցանկանում եմ տեսնել արքայական, շքեղ կյանքի խորհրդանիշ հիշեցնող պիտակ՝ կապույա գույնով: Ու առաջինը ստեղծվեցին կապույտ ծածկաթերթով, ընկալցի համով Garo Blue սիգարները: Հեռո բողարկեցինք Robusto, Churchill, Uno, Maduro սիգարները,

որոշ ժամանակ անց նաև Los Lectores տեսականին, որը ես նվիրել եմ Garo Habano-ի բոլոր աշխատակիցներին: Garo Habano-ի 10-րդ ամյակը կապակցությամբ թողարկեցինք Aniversario սիգարները: Այդ սիգարների լցունը բաղկացած է Գամինիկյան հանրապետությունում ու Նիկարագուայում աճող տարբեր ծխախոտների խառնուրդից:

Չեր ստեղծած սիգարներից որո՞նց եք Գուք նախապատվություն տալիս: Օգտվո՞ւմ եք այլ ընկերությունների արտադրանքից:

Իմ ստեղծած շարքից բոլորն էլ ինձ դուր են գալիս: Առավելայն մի բաժակ սուրճի հետ նախընտրում եմ մեղմ սիգարներ, ինչպես, օրինակ՝ Garo Blue, լանչին միգուցե կընտրեմ Robusto, իսկ երեկոյան ես կվայելեմ Aniversario: Ես ծխում եմ իմ բոլոր սիգարները: Այլ ընկերությունների արտադրանքից ես օգտվում եմ. միշտ էլ հետաքրքիր է նոր սիգարների համեր փորձել, տեսնել՝ ինչ են քո գործընկերներն առաջարկում: Օրինակ, երբ առաջին անգամ ես ու կինս Լոնդոնում էինք, առաջին վայրը, որ ես շաապեցի այցելել, սիգարի բուտիկներն էին՝ ուսումնասիրելու սիգարի լոնդոնյան ավանդույթները: Այդ օրը մեծ գումար ծախսեցի լավագույն ու ամենաթանկարժեք սիգարները ձեռք բերելու համար: Կինս զարմացել էր, բայց ես նրան բացատրեցի, որ դա նույն բանն է, ինչ համալսարանում կրթություն ստանալու համար գումար վճարել ու չզղջալ: Ես ոչինչ չեմ խնայի սիգարի նոր անսակակի ու համեր հասկանալու ու ճանաչելու համար:

ցով: On-line հաղորդակցության շնորհիվ սիգարի սիրահարները մեզ են փոխանցում իրենց նախընտրություններն ու ցանկությունները: Գլխավոր առավելությունը գնորդների մեծ զանգվածների պահանջներին ու պատվերներին արագ արձագանքելու հնարավորությունն է: Եթե դուք Կալիֆորնիայում եք և ցանկանում եք ձեր բարեկամին սիգարներ ուղարկել, այցելում եք կայքերից որևէ մեկը, հավաքում եք հասցեն, ընտրում եք տեսականին, արագ վճարում քարտով, և մի քանի ռուպե հեռու պատվիրված սիգարները հայտնվում են ձեր բարեկամի ձեռքում: Այս ամենի շնորհիվ դուք ազատվում եք ավելորդ մտաշուքություններից. ս'չ մի մաքսատուն, ո'չ մի փոստ: Մենք ձգասում ենք մեր բիզնեսը զարգացնել ուտեղծագործական նորամուծություններով: Բայց մեր հաջողությունների համար նախևառաջ պարտական ենք մեր հստախորդներին:

Ո՞րն է ձխելու լավագույն վայրը, այն վայելելու էթիկետը: Եվ ի՞նչ խորհուրդ կաաք սկսնակներին՝ ինչպե՞ս ընտրել լավագույն սիգար. բարձր գինը որակի նշան է:

Լավագույն վայրը առն այն հատվածն է, որն առանձնացված է աղմուկից ու մարդաշատ սենյակներից: Սիգարը հիմնականում ծխում են հանգիստ պայմաններում, հավասարակշռված ու խաղաղ հոգեվիճակով: Ես նախընտրում եմ սիգար ծխել մաքուր օդում՝ բաց երկնքի ասկ: Սիգար ծխելն ինձ համար արարողակարգ է, քան ուղղակի ծխելու գործընթաց:

Գիտեմ, որ սիգարի երկրպագուներից շատերը փորձում են

«Մենք ձգտում ենք մեր բիզնեսը զարգացնել ստեղծագործական նորամուծություններով: Բայց մեր հաջողությունների համար նախևառաջ պարտական ենք մեր հաճախորդներին»:

Որքա՞ն սիգար է 1 տարվա ընթացքում վաճառվում:
300 000-ից մինչև 1,5 մլն օրինակ: Սակայն մենք մատուցում ենք վաճառքի տարածքայնությունն ընդլայնելով ավելի բարձր ցուցանիշների հասնել: Garo Habano-ի մաոնաճյուղերը գործում են Գերմանիայում, Բուլղարիայում, Մլովակիայում և մի շարք այլ երկրներում, շուտով նաև Հորդանանում: Բոլոր մասնաճյուղերի վերապատրաստված մասնագետներն ամեն վայրկյան պատրաստ են օգնել հատկապես սկսնակ հաճախորդներին: Ես այցելում եմ մասնաճյուղեր, համոզվում սիգարի խառնուրդների տնօրենների և գնորդների հետ ու լսում նրանց ցանկությունները: Գրնորդներից շատերին ես բջջային հեռախոսով եմ բացատրում սիգար վայելելու արվեստը:

Դուք վարում եք Չեր բիզնեսը համաձայն արդի մարքեթինգի մարտավարության բոլոր սկզբունքների՞ բուտիկներում, շքեղ հյուրանոցներում և անգամ ինտերնետում: Ինչպե՞ս է հաջողվում ինտերնետի միջոցով վաճառել յուզս կատեգորիայի արտադրանք:

Ինտերնետը մեզ համար չափազանց կարևոր և եկամտաբեր սեգմենտ է: Մենք ստեղծեցինք մեր ինտերնետային սեգմենտը Garo Habano-ի հիմնադրամար գուգալհեռ՝ 1996-ին: Այդ ամիսներին ինտերնետով ապրանք վաճառելը, մասնավորապես սիգար, բացարձակապես նոր երևույթ էր: Մեր պաշտոնական էջից (www.garohabano.com) բացի Garo Habano-ի արտադրանքը ներկայացնում ու վաճառում ենք նաև CigarReviews.com, Smokemag.com կայքերի միջո-

մնանակել ժամանակի մեծ սիգարատեր Ուինսթոն Չերչիլին: Նա սիգար վայելելու կամակորություն ուներ. նախքան սիգար վառելը այն թաթախում էր կոնյակի մեջ: Սակայն թույլ տվեք մի քանի ռուպեով վերադառնալ իմ մասնագիտությանն ու հիշեցնել՝ կոնյակը այրում է լեզվի ռեցեպտորները և թույլ չի տալիս զգալ նոր բացվող փնջի նուրբ համը: Իսկ նման վերաբերմունքը սիգարի նկատմամբ պարզապես անթույլատրելի է: Սիգարը վառելուց առաջ ես գերադասում եմ մի քանակ ջուր խմել: Առաջին անգամ սիգար փորձելիս շաա կարևոր է ճիշտ ընտրությունը: Նույնքան կարևոր է իմանալ՝ ինչպե՞տ վառել սիգարը. այն պետք է վառել լուցկիով, մինչ համասեսելը թողնել մի փոքր մխա: Սկսեք ծխել քիչ և ծխեք բարձրորակ սիգար: Լավագույն տարբերակն է սկսել փոքր կամ միջին չափի, ոչ թունդ, մեղմ սիգարներով: Եթե այն շաա թունդ լինի, կարող է գրելխապտույա առաջացնել: Garo Habano-ի Blue տեսականին նախատեսված է հենց սկսնակ սիգարատերների համար: Լավ սիգարի ծածկութատերևը պետք է լինի երեխայի մաշկի նման հարթ, գրեթե անշճար գծերով: Բարձրորակության մասին է վկայում նաև ածխի սպիտակ գույնը: Ինչ վերաբերում է գնին, ապա դա ինդիվիդուալ է: Սիգարատերներից շատերն իրենց սիրած, բայց և ոչ քանակ սիգարները ոչնչի հետ չեն փոխի: Բայց կան մարդիկ, որ ընտրում են լավագույնը և պատրաստ են լավ սիգարի համար բարձր գին վճարել:

հարցազրույցը՝ Գոհար Մուրադյանի

